

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

1. — ՎԱՐԻՉ—ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ
2. — ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ
3. — ՅՐԱՆՍԱՑԻ ԵՒ ՅՈՒՆԱՍԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

1. — Այսօր մասնաւոր առաւելութեամբ եզրիստ ուղեւորեցաւ Վարիչ—Պատուի-
բակ եւ Ընդհ. Տնօրէն Ս. Վ. Մալեգեան, որ, Գահիրէի Շրջ. Յանձնաժողովին հետ կարգ
մը կարեւոր հարցերու մասին խորհրդակցելի վերջ, Կիպրոս պիտի անցնի, Մելգոնեան
Կրթ. Հաստատութեան վերակազմութեան ծրագիրը գործադրելու համար, արմատական կար-
գադրութիւններով:

Վերադարձին, Ս. Մալեգեան Պէյրութ եւս պիտի այցելէ:

Յուլիսի վերջերէ Բարիզ պիտի ըլլայ, որով անձնապէս իրեն նամակ ուղղողները
պէտք է ներողամիտ ըլլան երբ պատասխանը ուս տեսնան:

2. — Ինչպէս որ ծանուցիմք, Մելգոնեան Կրթ. Հաստատութեան Ընդհ. Տնօրէն Ս.
Գ. Կիրակոսեանի պատգամին վերջաւորումը անհամաձայնութեան հետեւանք ըլլալով, իր
մեկնումէն վերջ Առժ Տնօրէնութիւն մը կազմուած էր, գործակցութեամբը Վարժապետա-
նոցի թեւուչ Ս. Պ. Գեորգեանի Միութեան Մասնաժողովի անդամակցեալ Ս. Մ. Սուլթան-
եանի եւ Հաստատութեան հաշուեմէնիչ եւ վերահսկիչ Ս. Մ. Թոփնեանի, որ ցարդ խղճ-
մտօրէն կատարեցին իրենց պարտականութիւնը:

Միւս կողմէ, Կեդր. Վարչութեան կողմէ կարեւոր որոշումներ տրուեցան, Հաստա-
տութեան վերակազմութեան առթիւ:

Մելգոնեան Կրթ. Հաստատութիւնը պիտի ունենայ երեք բաժին. առաջինը՝ ձեւաբան,
2 նախապատասխան եւ 4 ալ երկրորդական վարժարանի ուսման ծրագրով, երկրորդը
Վարժապետանոց եւ երրորդը՝ Արհեստանոց:

Այս վերջնայն կազմակերպութեան համար պատգամ տրուած է յայտնի նախաձեռն
Ս. Հ. Անդրեասեանի, Կ. Պոլսէն Նիկիոսիա մեկնելի եւ տեղւոյն վրայ պատրաստել Արհես-
տանոցի ծրագիրը: Արհեստանոցը պիտի ունենայ մասնագէտ վարիչ մը, եւ անոր առընթե-
րակից գիւլատնեսական բաժինը եւս պիտի յանձնուի մասնագէտի մը: Պիտի հաստատուի
նաեւ առեւտրական դասընթացներու գործնական ճիւղ մը:

Յառաջիկայ տարեթշաւին համար Ընդհ. Տնօրէնի պատգամին հրաւիրուած է Տօթ.
Թ. Թոփնեան, որ ներկայիս տեղւոյն վրայ կազմակերպական եւ կանոնադրային գործերով
կը զբաղուի իբրեւ լիազօր—պատուիրակ: Աշխատութեան եւ պատասխանատւութեան բա-
ժանման հիման վրայ Կրթ. Տեսուչ նշանակուած է Ս. Պ. Գեորգեան եւ նմանական Տեսուչ
Ս. Միք. Ալեմեան, որ յառաջիկայ 1 Յուլիսէն սկսեալ ամառուան արձակուրդի միջոցին
փոխադրուաբար պիտի ստանձնէ Հաստատութեան տնօրէնութիւնը:

3. — Ներկայիս կազմակերպական աշխատանք մը կատարելու համար Յրաճապի
մէջ տրջան մը կ'ընէ Միութեան վարչակի գործիչ Ս. Օգնիկ Թադէոսեան, իսկ Յունասա-
նի գործիչ եւ Կրթ. բնիչ Ս. Կ. Խանիկեան Պուլկարիոյ Մասնաճիւղերը կ'այցելէ եւ նը-
պատարկելով վարժարաններուն վիճակը կը բնէ, ուրկէ վերջ իր առաւելութիւնը պիտի
տարուանակէ Ռումանիոյ մէջ:

Գ Ի Ի Ա Ն